ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2025թվականի N 076-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՏՈՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ և 42-րդ կետերի պահանջով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արենի համայնքի բնակավայրերում (Արենի, Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Գնիշիկ, Ելփին, Չիվա, Խաչիկ և Ռինդ) 2025 թվականին կազմակերպվող փառատոնների և գյուղի տոների պատշաճ կազմակերպման և իրականացման համար 2025թվականի տարեկան բյուջեից հատկացնել գումարներ.

1) Արենի բնակավայր՝ մինչև 8 միլիոն ՀՀ դրամ,

2) Ագարակաձոր բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

3) Աղավնաձոր բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

4) Արփի բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

5) Գնիշիկ բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

6) Ելփին բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

7) Խաչիկ բնակավայր՝ մինչև 5 միլիոն ՀՀ դրամ,

8) Չիվա բնակավայր՝ մինչև 2 միլիոն ՀՀ դրամ,

9) Ռինդ բնակավայր՝ մինչև 7 միլիոն ՀՀ դրամ,

Ընդամենը՝ 35 միլիոն ՀՀ դրամ:

2. Արենի համայնքի ղեկավարին՝

1) Բնակավայրերի թաղամասերը ներկայացնող տաղավարների ձևավորման և անհրաժեշտ այլ ապրանքների գնման նպատակով, թաղամասերի կողմից ներկայացված պատասխանատու անձանց հատկացնել 40 000 ՀՀ դրամ՝ մեկ տաղավարի հաշվով:

2) Համայնքի բնակավայրերը ներկայացնող տաղավարների ձևավորման և անհրաժեշտ այլ պարագաների գնման նպատակով բնակավայրերի վարչական ղեկավարներին և Արենի բնակավայրի պատասխանատուին հատկացնել 40 000 ՀՀ դրամ՝ մեկ տաղավարի հաշվով:

3. Փառատոնների կազմակերպման աշխատանքներին և իրականացվելիք ծախսերին ներգրավել համայնքի կողմից հիմնադրված <<Արփա>> բնապահպանական հիմնադրամին և <<Արենի համայնքային զարգացման>> հիմնադրամին:

4. Փառատոնների ժամանակ համայնքապետարանի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրվող գույքի (տաղավար, ծալովի աթոռ, ծալովի սեղան) վարձավճար սահմանել մեկ օրվա համար 10000 /տաս հազար/ ՀՀ դրամ, որը պետք է վճարվի «Արենի համայնքային զարգացման» հիմնադրամի հաշվեհամարին՝ կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՄԻՐԶՈՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**